ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՆԲԸԱԺՁԲ-17/16

ք. Երևան «27» 03 2017թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից և «Բևեռային ուղի» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Հակոբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն) համաձայն սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 902900 (ինը հարյուր երկու հազար ինը հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ընդ որում, յուրաքանչյուր մեկանգամյա Ծառայության գինը սահմանվում է պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա համաձայն սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցի:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են

պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը,

«Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.8 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.9 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.10 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն ք.Երևան, Կառավարական տուն 2 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011005023 /նախ-ն աշխ./ Հ/Հ 900011182012 /նախ-ն աշխ. ԲՈՀ/ ՀՎՀՀ 02512868	«Բևեռային ուղի» ՍՊԸ ՀՀ, ք. Երևան, Մանանդյան 25շ., բն.6 «Արարատբանկ» ԲԲԸ Զարգացում մ/ճ. Հ/Հ 1510032345990100 ՀՎՀՀ 02228306
Նախարարության աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
---------- Ն. Հարությունյան (ստորագրություն) Կ.Տ.	---------- Ա. Հակոբյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 1
27 03 << >> << >> 2017թ կնքված
N ՀՀԿԳՆԲԸԱՀԾՁԲ-17/16 գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման առարկա է հանդիսանում համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունը /այսուհետ՝ Ծառայություն/

Պարտադիր պայման է հանդիսանում Ծառայության մատուցման ընթացքում փոխարինվող մասերի նոր՝ չօգտագործված լինելը:
Ծառայության մատուցման ընթացքում նորոգվող սարքավորումների, ինչպես նաև պահեստամասերի տեղափոխումը իրականացվում է Կատարողի կողմից:

ՀՀ դրամ

Ծառայության անվանումը	*Տեխնիկական բնութագիր*	*Չափման միավորը*	*Ենթակա է գնման 2017թ. ընթացքում՝ ըստ պահանջի /անհրաժեշտության/*		
			Քանակը	*Միավորի գինը, ՀՀ դրամ*	*Ընդամենը՝ ոչ ավել քան*
Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ, այդ թվում.					**902900**
09.08.01.02 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում **/նախարարությունների աշխատակազմերի մասով/** ծրագիր, ընդ որում.					856200
Տպիչ Canon LBP 3000, HP LJPRO M 1536 DNF MEP, HP LJ 1005, HP LJ 1006, Canon i-SENSYS MF4410, MFC Canon MF 4010, HP LaserJet 1000, HP LaserJet 1010, HP LJ 1020, HP LaserJet 1100, Canon MF 3110, HP LJ Pro 400 MFP, Canon LBP 810, Canon i-SENSYS MF3220, Canon i-SENSIS LBP 6300DN պահպանման և վերանորոգման համար՝					
Քարթրիջի լիցքավորում	Լիցքավորվող տոների զանգվածը ըստ համապատասխան մոդելներ՝ ոչ պակաս քան 80-150 գրամ, տպաքանակը՝ 1500-2500 էջ, Էջի լցվացության՝ 5% դեպքում, որակի վերաբերյալ տոներ արտադրողի սերտիֆիկատի տրամադրմամբ	դրամ	1	1170	
Ռետինե լիսեռի փոխարինում նորով	Փոխարինված պահեստամասը պետք է ապահովի 30000 էջ տպաքանակ	դրամ	1	6300	
Ջերմաժապավենի փոխարինում նորով	Փոխարինված պահեստամասը պետք է ապահովի 30000 էջ տպաքանակ	դրամ	1	2700	

Թղթի մատուցման գլանի փոխարինում նորով	Փոխարինված պահեստամասը պետք է ապահովի 30000 էջ տպաքանակ	դրամ	1	5700
Թղթի բաժանման հանգույցի փոխարինում նորով	Փոխարինված պահեստամասը պետք է ապահովի 30000 էջ տպաքանակ	դրամ	1	3900
Լուսային թմբուկի փոխարինում նորով	Փոխարինված պահեստամասը պետք է ապահովի 8000 էջ տպաքանակը	դրամ	1	2100
Դոզատորի փոխարինում նորով	Փոխարինված պահեստամասը պետք է ապահովի 15000 էջ տպաքանակ	դրամ	1	1500
Կարատրոնի փոխարինում նորով	Փոխարինված պահեստամասը պետք է ապահովի 15000 էջ տպաքանակ	դրամ	1	2100
Մաքրող դանակի փոխարինում նորով	Փոխարինված պահեստամասը պետք է ապահովի 15000 էջ տպաքանակ	դրամ	1	1200
Պրոֆիլակտիկ մաքրում և յուղում	Տպող սարքի մաքրում (փոշեզրկում) և մեխանիկական մասերի յուղում այն քանդելու և հավաքելու միջոցով	դրամ	1	3300
Լազերային տպիչ Lexmark C530DN պահպանման և վերանորոգման համար՝				
Քարթրիջի լիցքավորում	Լիցքավորվող տոների զանգվածը ըստ համապատասխան մոդելներ՝ ոչ պակաս քան 80-150 գրամ, տպաքանակը՝ 1500-2500 էջ, Էջի լցվացության՝ 5% դեպքում, որակի վերաբերյալ տոներ արտադրողի սերտիֆիկատի տրամադրմամբ	դրամ	1	10800
Լուսային թմբուկի փոխարինում նորով	Փոխարինված պահեստամասը պետք է ապահովի 8000 էջ տպաքանակը	դրամ	1	9000
Պրոֆիլակտիկ մաքրում և յուղում	Տպող սարքի մաքրում (փոշեզրկում) և մեխանիկական մասերի յուղում այն քանդելու և հավաքելու միջոցով	դրամ	1	6000
XEROX PHASER 3100 MFP պահպանման և վերանորոգման համար՝				
Քարթրիջի լիցքավորում	Լիցքավորվող տոների զանգվածը ըստ համապատասխան մոդելներ՝ ոչ պակաս քան 80-150 գրամ, տպաքանակը՝ 1500-2500 էջ, Էջի լցվացության՝ 5% դեպքում, որակի վերաբերյալ տոներ արտադրողի սերտիֆիկատի տրամադրմամբ	դրամ	1	3000
Ռետինե լիսեռի փոխարինում նորով	Փոխարինված պահեստամասը պետք է ապահովի 30000 էջ տպաքանակ	դրամ	1	8100

Լուսային թմբուկի փոխարինում նորով	Փոխարինված պահեստամասը պետք է ապահովի 8000 էջ տպաքանակը	դրամ	1	4500	
Դոզատորի փոխարինում նորով	Փոխարինված պահեստամասը պետք է ապահովի 15000 էջ տպաքանակ	դրամ	1	4500	
Կարատրոնի փոխարինում նորով	Փոխարինված պահեստամասը պետք է ապահովի 15000 էջ տպաքանակ	դրամ	1	3900	
Մաքրող դանակի փոխարինում նորով	Փոխարինված պահեստամասը պետք է ապահովի 15000 էջ տպաքանակ	դրամ	1	2700	
Պրոֆիլակտիկ մաքրում և յուղում	Տպող սարքի մաքրում (փոշեզրկում) և մեխանիկական մասերի յուղում այն քանդելու և հավաքելու միջոցով	դրամ	1	3000	
Տպիչ HP DeskJ 840C պահպանման և վերանորոգման համար՝					
Քարթրիջի լիցքավորում	Լիցքավորվող տոների զանգվածը ըստ համապատասխան մոդելներ՝ ոչ պակաս քան 80-150 գրամ, տպաքանակը՝ 1500-2500 էջ, էջի լցվացության՝ 5% դեպքում, որակի վերաբերյալ տոներ արտադրողի սերտիֆիկատի տրամադրմամբ	դրամ	1	1500	
Տպիչ Toshiba e.studio 222cp/262cp պահպանման և վերանորոգման համար՝					
Քարթրիջի լիցքավորում	Լիցքավորվող տոների զանգվածը ըստ համապատասխան մոդելներ՝ ոչ պակաս քան 80-150 գրամ, տպաքանակը՝ 1500-2500 էջ, էջի լցվացության՝ 5% դեպքում, որակի վերաբերյալ տոներ արտադրողի սերտիֆիկատի տրամադրմամբ	դրամ	1	84000	
09.08.01.02 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում **/նախարարությունների աշխատակազմերի մասով/** ծրագիր - **ՀՀ ԿԳՆ ԲՈՀ**, ընդ որում.					46700
Տպիչ Canon LBP 3000, HP LJPRO M 1536 DNF MEP, HP LJ 1005, HP LJ 1006, Canon i-SENSYS MF4410, MFC Canon MF 4010, HP LaserJet 1000, HP LaserJet 1010, HP LJ 1020, HP LaserJet 1100, Canon MF 3110, HP LJ Pro 400 MFP, Canon LBP 810, Canon i-SENSYS MF3220, Canon i-SENSIS LBP 6300DN պահպանման և վերանորոգման համար՝					

Քարթրիջի լիցքավորում	Լիցքավորվող տոների զանգվածը ըստ համապատասխան մոդելներ՝ ոչ պակաս քան 80-150 գրամ, տպաքանակը՝ 1500-2500 էջ, Էջի լցվացության՝ 5% դեպքում, որակի վերաբերյալ տոներ արտադրողի սերտիֆիկատի տրամադրմամբ	դրամ	1	1170	
Ռետինե լիսեռի փոխարինում նորով	Փոխարինված պահեստամասը պետք է ապահովի 30000 էջ տպաքանակ	դրամ	1	6300	
Ջերմաժապավենի փոխարինում նորով	Փոխարինված պահեստամասը պետք է ապահովի 30000 էջ տպաքանակ	դրամ	1	2700	
Թղթի մատուցման գլանի փոխարինում նորով	Փոխարինված պահեստամասը պետք է ապահովի 30000 էջ տպաքանակ	դրամ	1	5700	
Թղթի բաժանման հանգույցի փոխարինում նորով	Փոխարինված պահեստամասը պետք է ապահովի 30000 էջ տպաքանակ	դրամ	1	3900	
Լուսային թմբուկի փոխարինում նորով	Փոխարինված պահեստամասը պետք է ապահովի 8000 էջ տպաքանակը	դրամ	1	2100	
Դոզատորի փոխարինում նորով	Փոխարինված պահեստամասը պետք է ապահովի 15000 էջ տպաքանակ	դրամ	1	1500	
Կարատրոնի փոխարինում նորով	Փոխարինված պահեստամասը պետք է ապահովի 15000 էջ տպաքանակ	դրամ	1	2100	
Մաքրող դանակի փոխարինում նորով	Փոխարինված պահեստամասը պետք է ապահովի 15000 էջ տպաքանակ	դրամ	1	1200	
Պրոֆիլակտիկ մաքրում և յուղում	Տպող սարքի մաքրում (փոշեզրկում) և մեխանիկական մասերի յուղում այն քանդելու և հավաքելու միջոցով	դրամ	1	3300	

Նանոթություն. Ծառայությունը մատուցվում է համաձայն սահմանված միավորի գների՝ ՀՀ 2017թ.-ի պետական բյուջեով տվյալ նպատակի համար նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակում:

Պատվիրատու

Ն. Հարությունյան

Կատարող

Ա. Հակոբյան

Հավելված 2
«27» «03» 2017թ կնքված
N ՀՀԿԳՆԲԸԱՀԾՁԲ-17/16 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայության անվանումը	2017թ պետական բյուջեի ծրագիր	Ծրագրի հաշվեհամար	Հոդված	Ենթակա է վճարման ՀՀ 2017թ պետական բյուջեից՝				
				1-ին եռամսյակ	6 ամիս	9 ամիս	տարի /մինչև դեկտեմբերի 25-ը/	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9
Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	09,08,01,02 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում **/նախարարությունների աշխատակազմերի մասով/** ծրագիր **ՀՀ ԿԳՆ**	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն հ/հ 900011005023	4232		169.1	435.1	856.2	856.2
	09,08,01,02 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում **/նախարարությունների աշխատակազմերի մասով/** ծրագիր **ՀՀ ԿԳՆ ԲՈՀ**	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն հ/հ 900011182012			11.7	23.4	46.7	46.7

Պատվիրատու

Ն. Հարությունյան

Կատարող

Ա. Հակոբյան